Հավելված
ՀՀ կառավարության 2018 թվականի
հունիսի 8-ի N 644 - Ն որոշման

Չ Ա Փ Ա Ն Ի Շ Ն Ե Ր

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԱՐԱՆ ՈՐՊԵՍ ՇՐՋԱՆԱՌԵԼԻ՝ ԲԱԶՄԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱ ՈՐԱԿԵԼՈՒ

1. Որպես շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարա է համարվում սույն հավելվածի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված չափանիշները բավարարող այն տարան, որն օգտագործվում է այնպիսի ապրանքների տարայավորման համար, որոնք կարող են տարայավորվել մեկ և ավելի անգամ օգտագործված տվյալ տեսակի տարայով, ինչպես նաև տվյալ տեսակի տարան գործնականում մեկից ավելի անգամ օգտագործվում է տարայավորման համար:

2. Տարան համարվում է բազմակի օգտագործման տարա, եթե միաժամանակ առկա են հետևյալ բոլոր չափանիշները՝

1) ապրանք արտադրող հարկ վճարողի կողմից ներքին կարգադրական փաստաթղթերով (հրաման, կարգադրություն և այլն) հաստատված՝ տեխնիկական կամ տեխնոլոգիական գործընթացները նկարագրող հրահանգներով կամ կանոնակարգերով կամ տեխնոլոգիական գործընթացները նկարագրող այլ փաստաթղթերով սահմանված է տվյալ տարայի բազմակի օգտագործման տեխնիկական հնարավորություն.

2) ապրանք արտադրող հարկ վճարողի կողմից օգտագործվող սարքավորումները, հոսքային գծերը և (կամ) այլ հիմնական միջոցները հնարավորություն են տալիս ապրանք արտադրող հարկ վճարողի կողմից տվյալ տարան օգտագործել բազմակի անգամ:

3. Տարան համարվում է շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարա, եթե սույն հավելվածի 2-րդ կետով սահմանված չափանիշների հետ միաժամանակ առկա են հետևյալ չափանիշները՝

1) ապրանք արտադրող հարկ վճարողի կողմից ներքին կարգադրական փաստաթղթերով հաստատված կանոնակարգերով սահմանված է, որ ապրանք արտադրող հարկ վճարողը գործնականում իրականացնելու է գործողություններ՝ տվյալ տարայի վերադարձելիությունն ապահովելու համար.

2) տարայավորված ապրանքների առք ու վաճառքի պայմանագրերով և (կամ) տարայի հետգնման (վերադարձման) գործարքը հավաստող հաշվարկային փաստաթղթերով հավաստվում է, որ ապրանք արտադրող հարկ վճարողը գործնականում իրականացնում է տվյալ տարայի վերադարձելիությունն ապահովող գործողություններ:

4. Համարվում է, որ ավելացված արժեքի հարկով հարկման նպատակով տարան որպես շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարա որակելու չափանիշներն առկա են, եթե միաժամանակ բավարարված են սույն հավելվածի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված բոլոր չափանիշները, որի վերաբերյալ մինչև ապրանք արտադրող հարկ վճարողի կողմից ապրանքների օտարումը տարայի յուրաքանչյուր տեսակի համար ապրանք արտադրող հարկ վճարողի ղեկավարի կողմից հաստատվել է սույն հավելվածի ձևի հայտարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Ձև

Հաստատում եմ

_____

(ապրանք արտադրողի հարկ վճարողի անվանումը)

_____

(ապրանք արտադրողի հարկ վճարողի ղեկավարի անունը, ազգանունը)

_____

(ստորագրությունը)

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱՆ ՈՐՊԵՍ ՇՐՋԱՆԱՌԵԼԻ՝ ԲԱԶՄԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱ ՈՐԱԿԵԼՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն հայտարարությամբ հավաստվում է, որ _____ ,
(ապրանք արտադրող հարկ վճարողի անվանումը, ՀՎՀՀ-ն)

կողմից օգտագործվող ստորև նկարագրվող տարան հանդիսանում է շրջանառելի՝ բազմակի օգտագործվող տարա:

I. ԲԱԶՄԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱՅԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

_____

_____

_____

(տարայի ամփոփ նկարագիրը (մասնավորապես, տարայի տեսքը, ծավալը, նյութը, որից պատրաստված է տարան, այլ բնութագրումներ)

II. ԲԱԶՄԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱՅԻ ՀԱՅՏԱՆԻՇՆԵՐԸ

_____

_____

_____

_____

(հայտանիշների ամփոփ ներկայացում, հղում ապրանք արտադրող հարկ վճարողի տեխնոլոգիական գործընթացները նկարագրող հրահանգներին (կանոնակարգերին), որոնցով սահմանված է տվյալ տարայի բազմակի օգտագործման տեխնիկական հնարավորությունը)

III. ՇՐՋԱՆԱՌԵԼԻ՝ ԲԱԶՄԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱՅԻ ՀԱՅՏԱՆԻՇՆԵՐԸ

_____

_____

_____

_____

(հայտանիշների ամփոփ ներկայացում, հղում ապրանք արտադրող հարկ վճարողի այն կանոնակարգերին, որոնցով սահմանված է, որ ապրանք արտադրող հարկ վճարողը գործնականում իրականացնելու է գործողություններ՝ տվյալ տարայի վերադարձելիությունն ապահովելու համար)